Բ. ՇՐՋԱՆ — ԹԻՒ 9 ՄԷԿ ԴԱՇԵԿԱՆ ՈՂՋ ԵՐԵՔՇԱԲԹԻ, 8 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1901

ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ
ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՔՇԱԲԹԻ, ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ
Տնօրէն-Խմբագիր Ց. ԱԼՓԻԱՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԳԱՀԻՐԷ, Ապին փողոց
ՄՈՒԴԱԹԹԱՄ մի՛շտ դիմաց

Pour les annonces s'adresser
à la Rédaction du Journal PHAROS
LE CAIRE — RUE ABDIN
vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒԻՆ
Մէկ անգամի համար տողը 3 Ղրշ. ոսկի։
Մէկ անգամէ աւելի ծանուցումներու համար մանրամասն պայմաններ։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . . Ղրշ. ոսկի 100
Վեցամսեայ . . . » 55
Եռամսեայ . . . » 30
ՕՏԱՐ ԵՐԿՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
Տարեկան . . . . . Ֆր. 26
Վեցամսեայ . . . . » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒԻՐ
ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒԱԾ
Ո ԵՒ Է ԳՐՈՒԹԻՒՆ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Թերթիս տնօրէնութիւնը որոշած է «Փարոս»ի 12րդ. թիւէն անդին այլ ևս թերթ չի ղրկել իր Եգիպտաբնակ բաժանորդներէն ամեն անոնց՝ որ մինչև այդ թուականը գոնէ եռամսեայ բաժանորդագրութեան մը փոխարժէքը չեն վճարած տնօրէնութեանս։

ՆԵՐՔԻՆ ՑԱՒ ՄԸ

Երկինք ամպոտելու վրայ է...։

Թէթև որոտումներ իրարու կը յաջորդեն, էլեկտրական հոսանքներ հոս ու հոն կը տարուբերին, փախուսիկ շանթեր ցիրաբար կը հալածեն, մթնոլորտը կը մթագնի, մղձկուտ բան մը կայ օդին մէջ։ Փոթորիկը պիտի պայթի։ Կ'ըզգանք կոր ատիկայ։

Չի կարծուի սակայն թէ մէտէորաբանական այս յառաջաբանը ներշնչուած է մեզի ձմեռնամուտի անակնկալ երևումէն։

Տարբեր կերպով վտանգաւոր, գերագրապէս անախորժ, անբնականօրէն վաղահաս ուրիշ տեսակ փոթորիկ մըն է որ ծայր կուտայ և որ շղթայազերծ մեր վրայ կը վազէ... Աղեքսանդրիայէն։

Նախ թող ներուի մեզի արտատպել հոս անձնական նամակ մը զոր կիկօին մէկը մեզ կը ղրկէ կիրակի օրուան թուականով։

Աղեքսանդրիա, 6 Հոկտ. 1901

..։ Խմբագիր
«Փարոս» լրագրի

Ներփակեալ ծեզ կը ղրկեմ 6 ղրուշի փուլ, փոխան 6 թիւ «Փարոս»ի որ մեզի ղրկած էք մինչև այսօր։

Հաճեցէք մեր բաժանորդագրութիւնը դադրեցնել, որովհետև մեր թաղական խորհրդին դէմ գրող թերթերը Գալիֆեանի ալային մէջ միայն կարդացող կրնան գտնել։

Մնամ յարգանօք
(Անուն և մականուն)

Բաժանորդագրութի՛ւն... օ՜հ, անարդ մետաղը, ամեն տեղ, ամեն ժամանակ։

Տամոկլէսի սուրը մեր գլխին վրայ կախած ըլլալուն համար արդեօք որքան հաճոյք կ'ըզգայ կոր մեր նախկին բաժանորդը որուն այդքան դիւրազգած ականջը մեր մտքէն անգամ չէր կրնար անցնիլ և որուն քով ատանկ à fleur de peau ազգասիրութիւն մը երևակայել՝ պարզապէս յիմարութիւն պիտի ըլլար։

Օ՜, ողորմելի մարդուկը։

Այդ ախբարիկը կը կարծէ թէ մենք կը պատկանինք լրագրապետներու այն շարքին որոնց համար լրագրութիւնը բաժանորդագրութեամբ կը սկսի և անով կը վերջանայ։

Եթէ խնդիրը՝ բաժանորդագրութիւն մը, կամ բաժանորդագրութիւններ առնուելուն կամ մերժուելուն վրայ դառնար, ապահովապէս չպիտի ներէինք մենք մեզի հրապարակել այդ պարագան, քանի որ բաւական ինքնաճանաչութիւն ունինք դատելու թէ այդպիսի զուտ ներքին խնդիր մը մեր ընթերցողները շահագրգռելու որևէ հանգամանք չունի։

Մեր ցաւը ուրիշ է։

Ներսիդիդ ունեցիր լրագրութեան հուրը, ջանա ընդհանուրին օգտակար ըլլալու, պաշտպանէ ճշմարիտը, սիրէ ուղղութիւնը, աչքի լոյս թափէ, զոհողութենէ մի խրտչիր, ունեցիր պաշտօնիդ գիտակցութիւնը, անձնական շահերդ զոհէ ընդհանուրին շահերուն, սրտիդ մէջ ունեցիր լաւագոյնը զգացումներուն, յոգնէ, չարչարուէ արտադրելու համար, մոռցիր թէ մարդ ես՝ խմբագիր ըլլալդ յիշելու համար, մէկ կողմ դիր անձնական բարեկամութիւններդ, մտքեդ մի անցըներ «ի՞նչ պիտի ըսեն»ը, հոգիիդ ալքերուն մէջ փնտռէ ինչ որ կայ անոր մէջ վեհանձն, բարի և գեղեցիկ, այս ամենը ըրէ, այո՛, և անդիէն կիկօին մէկը, թերթդ ևրեսիդ նետելով, չի հաւնի ըրածիդ; կոշտ բառերով այպանելէ ետքը պատժէ զքեզ տարեկան հարիւր ղրուշի տուգանքով մը։

Ի՞նչ ապերախտ ասպարէզ է մերինը...։

Ահա դէմդ մէկը որ ոչ կարդացածը կը հասկնայ և ոչ ալ համբերութիւն ունի սպասելու, տեսնելու համար թէ ո՞ւր պիտի յանգին գրածներդ և ինչ եզրակացութիւն պիտի տաս խորհրդածութիւններուդ,

Այն բանէ առաջ պէտք է միանգամ ընդ միշտ յայտարարենք թէ, չէ՛ թէ մէկ հատ, այլ մեր ամբողջ բաժանորդները եթէ ետ ղրկեն մեր թերթերը, ասիկայ պատճառ մը չպիտի ըլլայ որ դադրինք կէտ առ կէտ հետեւելէ մեր ծրագրին առանց նկատի առնելու թէ մեր այս ուղղութիւնը պատճառ պիտի ըլլայ որ թշնամիներ ստեղծենք մեզ դէմ այս ինչ կամ այն ինչ կուսակցութեան մէջ, թշնամիներ՝ որ կրնան ընկերական սանդուխին ամենէն վարը ինչպէս նաև ամենէն վերը գտնուիլ։

Մեր նշանաբանը շատոնց ընտրած ենք և չենք կրնար երևակայել պատճառ մը որ զայն փոխելու ստիպէ զմեզ։

«Լրագրութիւնը՝ լրագրութեան համար»։

«Փարոս»ը ասոր կամ անոր քմահաճոյքին ծառայելու համար չի հիմնեցինք, և մեր այս ձեռնարկած չործին մէջ դրամ վատնելու անհնարութիւնը նորութիւն մը չէ մեզի համար։

Աշխարհիս ամբողջ թաղականները և Գալիֆեան բոլոր ալայները միատեղ ժողոված, չպիտի կըրնան երբէք ըսել թէ «Փարոս»ը թերթ մըն է որուն մէջ աս ու ան իրենց կիրքերուն և կամ անձնական հաշիւներուն գոհացում կրցան տալ։

Կրնանք արծիւ մը չըլլալ խմբագրական աշխարհին մէջ, բայց շատերէն աւելի գիտենք թէ մեր պարտականութիւնը ո՛ւր կ'սկսի և ուր կը վերջանայ։

Լրագրութեան պարկեշտ կողմը դիւթած է զմեզ միշտ և անոր մէջ գտած ենք յաճախ մեր իղձերուն գոհացումը։

Գրել՝ ձեռքերնիս խղճմտանքնուս վրայ, ճակատնիս բաց, առանց որևէ կողմնակալութեան, ահա այն խոչը որուն կը ծառայենք։ Ասոր աշխատած ենք մինչև հիմայ, ասոր պիտի աշխատինք այսուհետև ալ։

Աղեքսանդրիոյ ծանօթ խնդիրը, իր կարևորութեան և այժմէութեան կըրկին տեսակէտով, չէր կրնար, բնականաբար, անտարբեր թողուլ զմեզ և իբրև տեղական թերթ մը անհրաժեշտ դատեցինք մեր տեսութիւնները պարզել խմբագրականներու շարքով մը որոնց վերջինը պիտի երևայ մեր յառաջիկայ հինգշաբթի օրուան թուով։

Ինչ որ գրեցինք գրուած կը մնայ և անոնց մէջ ստորակէտ մը չենք կրնար փոխել, որովհետև ապուշին մէկը թերթը ետ է դարձուցեր։

Մեզի համար Այբեան մը և կամ Բենեան մը՝ գոյութիւն չունին, և շատ ալ չենք հետաքրքրուիր գիտնալու համար թէ որո՞նք կը կազմեն այս ինչին ալայը, և կամ այն ինչին քամարիլլան։

Աղէկնիս խնդիր մը կայ որուն վերայ պէտք է ըսենք. ինչ որ կը տեսնանք, կը մտածենք և կ'ըզգանք։

«Փարոս»ը ոչ թաղականին թերթն է և ոչ այս ինչ ալային։

Մենց ոչ գնահատումին պէտք ունինք և ոչ ալ կը վախնանք իրենց սպառնալիքներէն, սպառնալիքներ՝ որոնց էն իրըզրին արժէքը... հարիւր ղրուշ է։

Եթէ բան մը կայ որմէ կը վախնանք և զոր կը յարգենք, այն ալ հանրային կարծիքն է որմէ շատ խըրախոյսներ և քաջալերութիւններ տեսած ըլլալնիս հպարտութեամբ կըրնանք խոստովանիլ։

Ինչ որ ալ ըլլայ Աղեքսանդրիոյ ծանօթ խնդրոյն ելքը, երբէք ըսել չպիտի տանք թէ կողմնակալ, գեռ թերթ մը եղանք։

Գիտենք նաև թէ մեր բռնած ընթացքը նիւթապէս ամենէն օգտակարագոյնը չէ և թէ այս ճամբով թերթը չենք կրնար մեծցնել և կամ քօրմանները չենք կրնար բազմապատկել, tant pis։

Մեր փառասիրութիւնը այդ չէ սակայն։ Խմբագիրներ կան որ իրենք զիրենք կը պզտիկցնեն՝ թերթերնին մեծցնելու համար։ Այդ բանը ոչ մեր նկարագրին կը յարմարի և ո՛չ ալ ճաշակին.

Հետևաբար, Աղեքսանդրիացիները, ընդ որս և մեր հանդուցեալ բաժանորդը կրնան հանգիստ պառկիլ։

«Փարոս»ը մեծցնելու աչք չունինք։

ՇՈԳ ՄՈԳ

Թուաբանութեան մէջ մէկ և մէկ երկուք կ'ընէ։

Սիրոյ մէջ մէկ և մէկ դարձեալ մէկ։

Ամուսնութեան մէջ սակայն, մէկ և մէկ երբեք չընե՞ր յաճախ։

"ԲԻԱՆՔՕ„Ն

(ՆՈՐԱՎԷՊ)

(Շար. Նախորդ թիւէն և վերջ)

Երիտասարդը յաջողեցաւ գտնել իր սիրականին նոր բնակարանը, Բերա։ Բայց մէկ տարուան մէջ երկու անգամ միայն կրնցաւ տեսնել զայն, պատուհանը։ Աղջիկը, նախ յուզուած, յետոյ նեղուած, քաշուած էր պատուհանէն։ Ա՛լ չափահաս, իր ծնողքին հլու հնազանդ, համեստ ու խօսքմուտ, պարկեշտ ցեղէ բոլոր հայ աղջիկներուն պէս, որոնց պարզունակ կեանքին մէջ սէրը արկած մըն է, դիտաւորութիւն մը, թոթովում մը, որոնք լռելեայն կը սիրեն —եթէ երբէք սիրելու ըլլան— ու լռելեայն իրենց սէրը կը զոհեն ամուսնութիւն Մողոքին, հասկցած էր թէ յիմարութիւն է շարունակելը։ Անկարելի էր որ ամուսնանար այդ երիտասարդին հետ։

Սկիզբները բաւական տառապելէն ետքը ա՛լ գտած էր սրտին հանդարտութիւնը, մոռացումին պաղ մոխիրները քաշած երբեմնի հրաբուխին վրայ։ Ասկէ զատ, ընկերական միջավայրը ուր կ'ապրէր հիմա, Բերա, աղտուկով ու զուարթութիւններով լեցուն, նոր էութիւն մը կ'արթնցնէր մէջը, նոր բնազդներ, պչրելու և հիացուելու իգական պէտքը։ Կինը կը ծնէր տակաւ իր մէջ. սիրուհին մեռնելու էր։ Մէկ երկու տարի երիտասարդը յուսահատ սիրով մը սիրեց. անձնասպանութեան գաղափարներ ունեցաւ ու վրիժառութեան կամէութիւններ, որոնցմէ ոչ մէկը ըրաւ, այլ աւելի արևելեան, աւելի հայկական բան մը... ինքզինքը «խահր»ի տուաւ։ Սկսաւ խմել, մխել, թափառիլ։ Երանեալ 150 ոսկիները մէկիկ մէկիկ կը զորէին, արիւն–քրտինքով վաստակուած, արիւն–արցունքով վատնուած ոսկիները։ Գործը երեսի վրայ ձգած էր ինչպէս ինքզինքն ալ։ Առողջութիւնը խանգարուեցաւ։

Օրին մէկը իմացաւ որ աղջիկը ամուսնացեր է Գրիգոր Եախշիպէկեանին հետ, միջին կարգի վաճառական մը։ Պահ մը մտածեց երթալ ամուսնոյն առջև դնել աղջկան նամակները, զորս կը պահէր ինչպէս յաճախ սնանկացած վաճառականը կը պահէ իր հին փառքէն ճառող՝ հաշուի տետրակները։ Ի՞նչ օգուտ սակայն։

* * *

Կը տեսնաք որ պատմութիւնս մինչև հոս տարօրինակ բան մը չունի։ Մեր ազգային բարքերէն առնուած պարզ տեսարան մըն է որուն նսանները շատ կը պատահին մեր շարքը։ Ատանկ երիտասարդներ պակաս չեն մեր մէջ և վերը պատմած պարագային մէջ ամէն հայ ծնողք և աղջիկ ալ միևնոյն կերպով պիտի վարուէին։ Ասկէ ետքը պատմելիքս սակայն բարքի այդ սովորական պատկերը տրամաբիր կերպով մը կը վերջաւորէ։ Ասկէ ետքը կ'սկսի տարօրինակը։ Կեանքը ունի այս տեսակ հրաշալի խաղեր, ատանկ ապշեցուցիչ կատակներ, անողոք հեգնութիւններ։ Սակայն պարաք կը համարիմ կրկնել թէ իրական է պատմելիքս։ Անոր բոլոր արժէքը արդէն իրական ըլլալուն մէջն է։ Եթէ գրագէտի ուղեղէ մը հնարուած հաւատաք զայն՝ իր կարևորութիւնը կը կորսնցնէ։ Իրապաշտ միտքերը թող շատանան պատմութեանս առաջին մասովը, վիպականներն ալ, թատերական յուզումներու սիրահար ընթերցողներս ալ թող վերջին մասին մէջ գտնեն իրենց փնտռածը։ Զայս ի գիտութիւն փափաքողաց։

Երկու տարի վերջը, երիտասարդը, որուն առողջութիւնը, ինչպէս արդէն ըսի, խանգարուած էր, հիւանդ ինկաւ։ Դիշերը ժամերով ծովուն վրայ մնացած էր ձուկ որսալու համար և սաստիկ պաղ առած։ Մինչև «ճիյէր»ները անցեր էր։ Ծեր մայր մը և քոյր մը ունէր, անտեղեակ իր սիրոյ տառամէն։ Քանի մը ամիսէն վերջին խնայողութիւնները սպառած էին արդէն։

Օր մը Բերացի Տիկին մը որ զիրենք կը ճանչնար ու երբեմն այցելութեան կուգար, հետը տարաւ գեղեցիկ ասեղնագործութիւն մը, զայն Բերա՝ ընտանեկան շրջանակներու մէջ վիճակահանութեան դնելու համար։

Շաբաթ մը ետքը վերադարձաւ, ժողված դրամը, թուղթի մը մէջ փաթթած, սեղանին վրայ դրաւ։ Բացին։

—Ա՛ս ալ, ըսաւ ճմռթկուած թուղթը շակելով, թիւ գրուածներուն ցանկն է. 190 թիւ լեցուցի։

Հիւանդը ցանկը ուզեց։ Ո՞վ էին այդ անծանօթ երջանիկները —դրամով և առողջութեամբ— որ կարեկցեր էին իրեն պէս կրկնակի աղքատի մը։

—Ըսի՞ր թէ որու համար է, հարցուց։

—Այո՛, ըսի անունդ և ուր տեղէն ըլլալդ... ի՞նչ կայ որ... քեզի ճանչցող չի կայ, մի՛ վախնար։

Լռութենէ մը վերջը յարեց։

—Մէկը կայ, քսան թիւ գրուեցաւ... իրեն ճար նէ չպիտի գրուէր եա՛. կինը վրայ տուաւ. ի՞նչ աղէկ կին է եղեր... ի՞նչ ալ զգայուն... քու հիւանդ և թշուառ վիճակդ նկարագրած ատենս [illegible]ը լեցան... ինչ ըրաւ չըրաւ բոնի 20 թիւ գրել տուաւ էրկանը, որ խօսքը մէջերնիս, քիչ մը ձեռքը զոց է...։

—Ո՞վ է, անունը ի՞նչ է, ըսաւ քոյրը։

—Գրիգոր Եախշիպէկեան, մալիֆաթուռայի վաճառական...։

Հիւանդը խեղդուկ բացագանչութիւն մը արձակեց, թուղթը ձեռքէն վար ինկաւ։ Քովը ժողվուեցան —ի՞նչ կայ, ի՞նչ է։

—Հի՛չ, ցաւս է, ըսաւ։

Մ. Ս. ԿԻՒՐՃԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

Կիրակի օր Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն մէջ տեղի ունեցաւ Գալստեան վարժարանի երկսեռ աշակերտաց մրցանակաբաշխութեան համեստ հանդէսը ի ներկայութեան երկու սեռէ բազմաթիւ հանդիսականներու, որոնց մէջ կը նշմարուէին եկեղեցական դասը, Հոգաբարձութեան անդամները, Քաղաքական ժողովոյ կողմէն երկու ներկայացուցիչներ, ուսուցչական մարմինը են։

Հանդէսը սկսաւ պզտիկ երգով մը զոր երգեցին մանկապարտէզի սիրուն փոքրիկ մանուկները իրենց վարժուհւոյն առաջնորդութեամբ։ Որմէ յետոյ Տ. Ե. Սէթեան, վարժարաններու տնօրէնը, բանախօսութիւն մը կարդաց որուն մէջ պարզուած էր այն ծրագիրը զոր գործադրել մտադրած է Պատ. Հոգաբարձութիւնը, յառաջիկայ դպրոցական տարեշրջանին մէջ։

Այս ատենախօսութենէն ետքը, մրցանակաբաշխութիւնը սկսաւ և ամէն աշակերտի զատ զատ տրուեցաւ մրցանակներ և վկայականներ։

Մրցանակաբաշխութեան գործողութիւնը՝ յոգնեցուցիչ միօրինակութենէ մը փրկելու համար, աշակերտները և աշակերտուհիները, փոխն ի փոխ երգեցին ազգային և դպրոցական երգեր։

Հանդէսը վերջացաւ Տ. Եղնիկ աւագ քահանայի հակիրճ մէկ բանախօսութիւնով որուն յաջորդեց Տէր Մամբրէ Հօր աւանդական պահպանիչը։

Աշակերտաց ծնողքները լաւ տպաւորութեան տակ մեկնեցան իրենց հետ տանելով . . . զաւակնին։

—Անցեալ թուով գրած էինք թէ՝ Կ. Պոլսոյ Կրօնական ժողովոյ կողմէ տրուած մէկ որոշմամբ, կարգալոյծ ըլլալու դատապարտուած է քաղաքիս մէջ գտնուող Գաբրիէլ Զէնճիրճեան անուն քահանան։ Ականատես վրկաներ մեզ կըսեն թէ այդ ժամագործ–ասպետ–քահանան կը շարունակէ իր սքեմը կրել և խաչքաշիւը գլխին վրայ՝ ՔՕՇՕԿՐԱՔ ըսել կուտայ արաբ կիներու իր Ապտիսի կրպակին մէջ։

Կը ներուի՞ մեզ արդեօք հարցնել Ս. Առաջնորդ Հօր թէ այս գայթակղութիւնը ե՞րբ պիտի վերջանայ։

ՏԵՂԱԿԱՆ

Ն. Բ. Մայր—Խտիվուհին որ տակաւին Պոլիս կը գտնուի, Նոյեմբերին սկիզբը ճամբայ պիտի ելլէ Գահիրէ դալու համար։

—Ղազի Ահմէտ Մուխթար փաշա ամսոյս վերջերը պիտի վերադառնայ Գահիրէ։

—Պէյրութէն կը գրեն թէ տեղւոյն Ռուսական և Ֆրանսական հիւպատոսները մասնաւոր քննութիւն մը բացած են վերջերս տեղի ունեցած զէյքերուն վրայ և տեղեկագիր մը գրկած են իրենց տէրութիւններուն։

Կերևայ թէ այս խնդիրներուն կարգադրութիւնը այդ երկու մեծ պետութիւնները յանձնառած են։

—Վերջացող 48 ժամուան մէջ ժանտախտի 3 դէպք միայն պատահած է, երկուքը ի Միթ–Ղամր և միւսը յԱղեքսանդրիա։

—Մարտ ամսէն մինչև հիմայ թղթատարական վարչութեան կողմէ հաստատուած խնայողական մնտուկին յանձնուած դրամներուն գումարը կը հասնի 60,000 անգլիական ոսկիի։

—Տարպ–էլ–Կամամիզի նախնական վարժարաններու ուսուցիչներէն մին, Շէխ Ահմէտ Ամէր, աշակերտի մը փորին անանկ կից մը տուած է որ խեղճ տղան հարուածին ազդեցութեան տակ մեռած է։ Ջորեբարոյ այդ դաստատուն ձերբակալուած է։

—Աւասիկ Եգիպտական երկաթուղիներու, հեռագրական և Աղեքսանդրիոյ նաւահանգիստի միացեալ վարչութեան Սեպտեմբեր 1է մինչև 10 ունեցած հասոյթը։

Երկաթուղիք	Եգ. Ոս. 46,257
Հեռագրատուն	2,696
Աղեքսանդրիոյ նաւահանգիստ	3,036
Այլ և այլք	306
Ընդհ. գումար	52,295

ԹԵՐԹՕՆ «ՓԱՐՈՍ»Ի (9)

ԺՐՀԱՆ ՏԻՎՐԻ

ԲՐԷՆՍ ՄՈՒՐԱՏ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԲԱՐՔԵՐԷ ՆԵՐՇՆՉՈՒԱԾ ՎԷՊ

ԳԼՈՒԽ Գ.

Հանրմը այն ատեն վեհանձնութեան ըղձացում մը ունեցաւ, յայտարարեց թէ կ'ուզէր Սթա Ապուհան քովը պահել, խոստանալով որ օժիտ տայ և ամուսնացնէ, այն պայմանաւ որ ապարանքին մէջ՝ սպիտակ գերուհիներուն վիճակն ունենայ, որոնց հետ բաց աստի, նոյն առանձնաշնորհումները պիտի ունենար, անսնցմէ աւելի ունենալով անկախութիւնը զոր ունէր ազատածին աղջկան իրաւունքովը։

Սթա Ապուհայի մայրը այս առաջարկութեան մէջ բախտ մը տեսաւ և փութանակի ընդունեցաւ։

Այն ժամանակէն ի վեր, պզտիկ աղջիկը կին եղած էր, աղուոր կին մը, որուն վրայ հանրմը իրաւ կրնար պարծենալ։

Մերենայութեանց, վրէժխնդրութեանց և ոխակալութեանց այս միջավայրին մէջ ամենուն համակրութիւնը իրեն յանկուցանող բանը՝ մանաւանդ իր յարատեւ զուարթութիւնն էր, անյեղլի խնդամտութիւն մը, որոնց վրայէն շուտ մը կը սահէին կ'անցնէին բոլոր հոգերն ու վիշտերը. այսպէս կարողացած էր մեկուսի կեանք մը յերիւրել իրեն, միայն իր փեսուրները և երգերը հոգացող գեղանիկի մը գոյութիւնը...։ Վանդի կ'երգէ՛ր... այնչափ աղուոր կ'երգեր որ, քանի քանի անգամ, փաշան կանգ առած էր մտիկ ընելու, և Բամաղանի տօնի օրերը, ամէն գիշեր ինքը կը գրօսցնէր ամենքը՝ իր Թրքական գեղգեղանքներովը, իր արաբական օգուտներովը՝ որոնք բոլոր այդ կիներէն գոհունակութեան «ա՛խ, ա՛խ»ներ կը խլէին։

Միայն Իքպալ վէս և խրսխտ կը մնար իրեն նկատմամբ. Զմիւռնացի կինը գուշակա՞ծ էր արդեօք թէ Սթա Ապուհա, այդ Ֆէլլահ աղջիկը ի՞նչ հանճարեղ կին մը պիտի ըլլար օր մը...։ Արդեօք նախազգացո՞ւմ ունեցած էր որ, մինչդեռ ամենքը պալատին մէջ կը խոնարհէին իր տիրապետութեան ներքև, աղքատ աղջիկը, Զոհրաի պաշտպանեալը պիտի ընդվզէր, և Իքպալի անձին վրայ ուրիշ բան պիտի չուզեր տեսնել՝ բայց միայն գերուհի մը և ազատածին աղջկան իր արհամարհանքովը պիտի ապտակոծէր զինքը։

Իքպալի այդ առաջին զիրքն եղաւ պատճառ այն ատելութեան որով անմիջապէս կինուեցաւ անոր դէմ Սթա Ապուհա. Իգպալի նկատմամբ միայն դժնեմ և չարասիրտ եղա՛ւ։

Այս ամենը կը պատմէր Ժէրմէնին կեբակուր տուած ատենը, ջուր տալու, ճանճերը վանելու համար խօսքը ընդմիջելով... կամ համբուրելու համար զանի, ի մեծ զարմանս աղջկանը, որ վարժուած չէր դեռ այս ցոյցերուն։

—Ի՞նչ աղուոր էք, կը մրմնջէր Սթա Ապուհա՝ թուխ ձեռքովը փայփայելով Ժէրմէնի ոսկի մազերը, ի՞նչ աղուոր էք և ո՞րչափ կ'ուզէի ձեզի նմանիլ...։

Ժէրմէն կը ժպտէր, յա՛մայս զգածուած այդ գմայլանքէն որուն անկեղծ ըլլալը կ'իմանար։

—Կը տեսնէ՞ք, կը յարէր Սթա Ապուհա, զգուշանալու էք. թշնամիներ պիտի ունենաք... ու ոխերի՞մ թշնամիներ...։

Գ. ԵՒ Կ. ՄԵԼՔՈՆԵԱՆ

ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ

ԳԱՀԻՐԷ, ԳՈՐԾԱՐԱՆ ԹԷՎՖԻՔԻՃԷ — ԳԼԽԱՒՈՐ ՎԱՃԱՌԱՏԵՂԻ ՆԱԽԿԻՆ ԶԱԲԹԻՃԷԻ ՇԷՆԲԸ

—Հակառակ լրագիրներու տարածած լուրին, Արապի փաշա երբէք հեռագրով արտօնութիւն չէ խնդրած խափվին ներկայանալու համար։ Եւ չի կրնար ալ այդ արտօնութիւնը խնդրել, որովհետև Եէյլանի աքսորեալը տակաւին ներման չէ արժանացած, այլ պարզապէս արտօնուած է, իր ընկերներուն պէս Եգիպտոս վերադառնալ։

—Գերմանիոյ կայսեր գաւակներէն մին, Նոյեմբերի սկիզբները Գահիրէ պիտի գայ, իբր պարզ զբօսաշրջիկ և քանի մը օր հիւր պիտի ըլլայ Ն. Բ. Խափվին։

—Նիլի այս տարուան բարձրացումը հաւասար է 1897ի և 1901 բարձրացման։ Սակայն Սեպտեմբերի 20էն ի վեր յանկարծ քաշուիլ սկսաւ, ինչ որ մտահոգութիւն կը պատճառէ եկող տարուան երաշտութեան մասին։

ՖՐԱՆԳՕ–ՌՈՒՍ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ըստ «Կօլուա»ի Ֆրանգո–Ռուս դաշնադրութիւնը կատարուած բան մը չէ արդէն, Աւստրօ–Գերմանական դաշնագրութեան նման, սակայն ասոր հանգամանքը զուտ պաշտպանողական է։

Երկու երկիրներու մէջ հաստատուած զինուորական պայմանագրութիւնէն սա կերպով կը տարբերի որ, եթէ վերոյիշեալ երկու պետութիւններէն մին յարձակում կրէ, միւսը անոր օգնութեան պիտի հասնի ոչ միայն իր բանակին մէկ մասովը, այլ և իրեն տրամադրելի ունեցած բոլոր զինուորական միջոցներովը։ Աւստրօ–Գերմանական դաշնագրութեան նման Ֆրանգօ–Ռուսն ալ մէջը սա պայմանը ունի որ ոչ մէկ կողմը կրնայ թշնամիին հետ խաղաղութիւն հաստատել, առանց միւսին հետ համաձայնելու։

Եւ սակայն բացառիկ կարևորութիւն ունեցող կէտ մը կայ որուն մէջ Ֆրանգօ–Ռուս դաշնակցութիւնը կը տարբերի Աւստրօ–Գերմանականէն և Ֆրանգօ–Ռուս առաջին զինուորական պայմանագրութիւնէն, այն է որ դաշինքին մէջ ոչ յիշատակում մը չկայ թէ որո՞ւ դէմ հաստատուած է այդ դաշնադրութիւնը. մինչդեռ Աւստրօ–Գերմանականին առաջին յօդուածը որոշապէս կը բացատրէ թէ դաշնակցութիւնը պիտի սկսի անմիջապէս որ պայմանագրող պետութեանց մին յարձակում կրէ Ռուսիայէ, իսկ Ֆրանգօ–Ռուս զինուորական պայմանագրութիւնը Գերմանեան կակնարկէր։

Այսպէս ուրեմն Ֆրանգօ–Ռուս դաշնադրութիւնը, ընդհանուր առմամբ կը խօսի «յարձակողական պատերազմի» մը վրայ, առանց բացորոշօրէն մատնանիշ ընելու այն պետութիւնը և կամ պետութիւնները՝ որոնց դէմ ուղղուած է։

Ֆրանգօ–Ռուս դաշնադրութիւնը Աւստրօ–Գերմանականին կը նմանի ուրիշ տեսակէտով մը ալ, այն է որ որոշ պայմանաժամ մը դրուած չէ։ Ֆրանգօ–Ռուս դաշնադրութիւնը կը վերջանայ ի վեր հանելով իր պաշտպանողական հանգամանքը և նպատակը որ խաղաղութեան պահպանումն է։ Երկար ուզիման մը չէ և շատ քիչ պայման կը պարունակէ։

ՆԱԽԱԳԱՀ ՌՈՒԶՎԷԼԹ

Միացեալ Նահանգաց Նախագահը, Թէոտոր Ռուզվէլթ որ արդէն Սպանօ–Ամերիկեան պատերազմէն ի վեր ամենամեծ ժողովրդականութիւնը շահած է, այսօր՝ օրուան մարդն է գրեթէ։

Զայն ընտանօրէն «Թէտի» կանուանեն, Միացեալ Նահանգներու ամենէն երիտասարդ Նախագահն է, վերջին ծայր զարգացած մարդ մը, այսինքն բացառաբար, self maid մարդ մը չէ, Ամերիկայի Հավարա քօլէճէն ելած է որ Միացեալ Նահանգներու ամենանշանաւոր համալսարանն է։

Համալսարանին մէջ լուրջ բնաւորութիւն ունեցող մարդ մը կերևար, հոն նշանաւոր հանդիսացած էր նաև, իբր տեսակ մը Հէրակլէս, հզօր Պօքսէօր մը, աննման ըմբիշ մը։ Համալսարանէն ելլելէն յետոյ, տարի մը, Միացեալ Նահանգաց ծայրագոյն հարաւարևմտեան կողմերը անցուց, հոն իբր սբօրթ cow boy երու կեանք մը վարելով։ Այդ տեղը տեսակ մը պետ դարձաւ, իր այժին, հիանալի ձիավարութեան և Ֆէնիմօր Քուբրի հերոսներուն արժանի կարդ մը քաջագործութեանց համար։

Նիւ Եօրք դառնալուն պէս, քաղաքացիները հիացան այդ մարդուն վրայ, որ ամենաբարձր զարգացման կը միացնէր լեռնադաշտերու անզուսպ ապեստութիւնը. զայն տարօրինակ, անհեթեթ մարդ մը կը նկատէին։ Քիչ յետոյ երեսփոխան ելաւ, ապա զանազան հասարակական պաշտօններ վարեց և յամառօրէն Միացեալ Նահանգաց կաշառակեր վարչութիւններուն դէմ պայքար մղեց։ Հակառակ իր ծանրածանր զբաղումներուն ոտքի չէր փախցնէր սակայն Պօքսի և կամ ըմբշամարտութեան մրցումներուն մէջ երևալու։

Քուպայի պատերազմը հրատարակ եղուն պէս, իր կազմած մէկ հեծելախումբովը — որոնք Rough Riders (կորովի հեծեալներ) անուանեցին— պատերազմի մեկնեցաւ։

Ծայրայեղ քաջութիւն մը ցոյց տուաւ սպանիական կրակին դէմ։ Սանժուանի պատերազմին իրիկունը իրեն խմաց տուին, որ իր ձին մեռած էր և հեծելաշերուն շատերն ալ առանց ձիի էին։ Գնդապետ Ռուզվէլթ անմիջապէս ափ մը մարդիկ կը հաւաքէ և իր գունդին քով գտնուած Ամերիկեան կանոնաւոր զօրախումբի մը մէջէն 20 հատ ձի կը ժողովէ։

Այդ իրիկուան պատերազմէն յետոյ, ուր Ռուզվէլթ ոտքի պէս կռուեցաւ, —Ռաք Ռայդրսները հոն կենդանի թիրախ մը ներկայացուցին թշնամւոյն— կանոնաւոր գունդին հրամանատարը, բողոք տուաւ Ռուզվէլթի դէմ, բայց ապագայ Նախագահը բաւականացաւ պատասխանել թէ առանց ձիու չէին կրնար պէտք եղած յարձակումները կատարել, իրաւունքը հզօրագոյնինը եղաւ։

Ռուզվէլթի նկարագիրը արդէն հանրածանօթ ըլլալուն տարակոյս չկայ թէ Միացեալ Նահանգաց նորընտիր Նախագահը Պօքսի մրցումի մը պէս պիտի նկատէ զիւանագիտութիւնը, զոնէ այսպէս կրսեն իր հակառակորդները։

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԵՐԷԿԻ ՀԵՌԱԳՐԵՐ

ԼՈՆՏՈՆ, 5 ՀՈԿՏ.— Թագաւորը ապաքինած պէս է։ Տր. Ռէյա Լոնտոն դարձած է։

Քէբէվիչի գունդին կորուստները 54 մեռեալ և 138 վիրաւորեալ են։ Բազմաթիւ Նաթալի կամաւորներ Հէլբմաքարի մէջ 150 Պօէրի դէմ մղուած կռուի մէջ ընպանուած են։

«Սթանտարտ» Պրիւքսէլէն կիմանայ թէ Լահէյի ժողովին մէջ իրաւարարութեան համար Պօէրներուն ըրած կոչին մերժումը պաշտօնապէս հաղորդուած է երէկ Պ. Քրիւկէրի։

ՀՌՈՄ, 5 ՀՈԿՏ.— Իտալիոյ և Աւստրիոյ մէջ Հռոմի տալմատական վանքին համար ծագած անհամաձայնութիւնը կարգադրուած է։

ՔԷՔԹԱՈՒՆ, 5 ՀՈԿՏ.— Քաբի գաղութին, Օրանժի՝ արևելեան, հիւսիսային և հարաւային կողմը փոքրիկ կռիւներ տեղի ունեցած են։ Պօէրները մեծ կորուստներ կրած և գլխաւորաբար շատ գերիներ ձգած են։ Հրամանատար Բրէթօրիուս և շատ մը անուանի հրամանատարներ գերի բռնուած են։ Քրուիցինկէր երեք անգամ յուսահատ ճիգեր ըրած է Օրանժէն Քաբ մտնալու բայց ետ մղուած է։

ԼՈՆՏՈՆ, 5 ՀՈԿՏ.— Պաշտօնական հրատարակութիւններէն կերևի որ պատերազմի սկզբէն ի վեր մեր կորուստները 75,562 հոգի են, որոնցմէ 53,273ը աղէկցած և դարձեալ իրենց դրօշակներուն տակ ղրկուած են։

ԲԱՐԻԶ, 5 ՀՈԿՏ.— Զօրավար Հարթունկ իր հրաժարականը տուած է Պատուոյ լեգէոնի խորհուրդին անդամակցութենէ։

Կ. ՊՈԼԻՍ, 5 ՀՈԿՏ.— Սուլթանը կրկնած է նորէն այն արդիլքը որով հրէաները 3 ամիսէ աւելի, Պալեստինի մէջ չեն կրնար մնալ։

ԲԱՐԻԶ, 6 ՀՈԿՏ.— Ան վերապահումները որոնցմով Թուրքիան կընդունէր Լօրանտօի պահանջները մեծակշիռ զեղջ մը ընել կուտային ամբողջ գումարէն, սակայն Ֆրանսական կառավարութիւնը մերժած է այդ առաջարկը։ Կը պնդէ որ բոլոր պահանջուած գումար այսինքն 344,000 ոսկին վճարուի։ Կսպասուի որ Ֆրանսա ճնշումի դիմէ։

Կ. ՊՈԼԻՍ, 6 ՀՈԿՏ.— Ֆրանսական Ազգաբանական Լօրանտօի միջադէպին առթիւ, խիստ ազդու կերպով գրուած է և ամբողջովին նախկին պահանջներուն վրայ կը պնդէ։

Ռուսիա՝ Բ. Դրան լուրջ խուզարկութիւնը կը հրաւիրէ Հայաստանի կացութեան վրայ։

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ՍԱԿԱՐԱՆ

ԱՐԺԷԹՈՒՂԹՔ

Աղեքսանդրիա, 4 Հոկտ.

Բրիվիլէժիէ		100	1/2
Իւնիֆիէ		107	1/4
Տայիրա Սանիյէ		103	/—
Տօմանեալ		104	1/4
Թրքական Քոնսոլիտէ, սեռի C		26	57.
Ռումէլի Երկաթուղի	ֆր.	102	/
Քանալ տը Սուէզ	»	370 6	/—
Քանալ տը Սուէզ օպլիկ.	»	640	/—
Նաշ. պանք օֆ Էճիպթ	Ա. Ո.	11	5/16
Աղէքս. Թրամվէյ (բրիվ.)	ֆր.	48	1/2
Աղէքսանդրիոյ Թրամվէյ) (ագիոն տիվիտանտ	»	29	/—
Քրէտի ֆոնսիէ եգ. ագիոն	»	555	/—
Քրէտի ֆոնսիէ 3 0/0	»	264	1/2
Ջրի Ընկ. Գահիրէ	»	637	1/2
» Աղէքսանդրիա	Ա. Ո.	35	7/8
» Թանթա	»	12	/—
Պէհէրայի անանուն ընկ.	»	48	/—
Իճիբշէն մարքէթս օպլ. 5 0/0	»	100	/—
» » ագիոն	»	0. 15.	3
» սոլթ ընտ սոտա	»	0. 15.	9
Նուբկոր Լիչ Օթէլս	»	4.	/—

ԲԱՄՊԱԿ ԵՒ ԱՐՄՏԻՊ

ՔՕՆԴՐԱ

Աղեքսանդրիա, 4 Հոկտ.

Բամպակ. Նոյ. Թալր.	9	11/16	—	/—
» Յունվ.	» 10	3/16	—	/
» Մարտ	» 10	13/16	—	/—
Պիզրէ. Նոյ. Դեկ. Յուն. Ղրուշ	63	3/4	—	/—
» փետ. մարտ	» 63	35/40	—	/—
Բակլա. սեպ. հոկտ.	» 90	1/3	—	/—
» Նոյ. դեկ. յվ.	» 93	3/4		/—

—Թշնամինե՛ր... և ինչու՞ համար... որքա՞ն ատելութիւն։

—Աղէկ մտիկ ըրէք. Օրիորդ Լօռ, փաշային կնոջը մամանակ հոս եղող պառաւ մը, ինծի պատմած է որ ատենօք Ֆրանսայի մէջ գեղեցիկ պալատներ կան եղեր, որոնց բոլորտիքը չար անդամ մարդիկ կը լարեն եղեր գայլի որագայթներ, կը փորեն եղեր փոսեր, տեսակ տեսակ վտանգներ, ուր կիյնան եղեր այդ կողմերը մօտենալու յանդգնող անխոհեմներ...։ Արդ, հոս մեր Եգիպտական պալատներուն մէջ գայլեր չկան, աւարառուներ չկան, բայց որոգայթները յար և նման են, միայն թէ անոնց բոլորտիքը չեն գտնուիր, այլ ներսը, ահա բոլոր տարբերութիւնը։

—Աստուա՛ծ իմ, կը թոթովէր Ժէրմէն այս զգաստիքները լսելով վրդոված, աս ի՞նչ տեղ ինկեր եմ։

—Այս ըսածս, յարեց Սթա Ապուհա, ձեզի վախ տալու համար չէ, կրնայ ըլլալ որ շատ երջանիկ ըլլաք այս տանը մէջ, բայց հոս մէկը կայ զոր չեմ սիրեր։

Սթա Ապուհայի աչքերը իրենց անկեղծութեան մէջ կատաղութեան այնպիսի արտայայտութիւն մը ունեցան որ իր ըսածին վրայ բնաւ տարակոյս չէր թողուր։

—Մէկը զոր կատեմ և որ ձեզմէ կը գարշի ու կատէ՝։

—Ինձմէ կը գարշի ու կատէ՝։

—Այո, ձեզի, վասնզի գեղեցիկ էք, վասնզի ուսեալ էք և բարի ըլլալ կ'երևիք...։ Մէկը որուն ծրագիրները պիտի խանգարէ ձեր գալուստը, մէկը որուն նեղութիւն կը պատճառէք վերջապէս, և որ ամեն ձեռքէն եկածը պիտի ընէ ձեզի ասկէ անհետացնելու համար։

—Բայց այդ ըսածնիդ սարսափելի բա՞ն է։

—Ոչ, Եգիպտոսի մէջ ամեն օր պատահած բան է. բայց ես հոս կեցեր եմ, աչքերս բաց են, լեզուս բերնիս մէջ կը զանուայ և... ձեզ պիտի պաշտպանեմ։

Այնչափ ծիծաղաշարժ բան էր այդ պզտիկ աղջիկը, դոռոզաբար կռուի կեցած, ճակատը վեր, նայուածքը բոցափայլ, անյողդող եղանակով մը իր պաշտպանութիւնը մատուցանելով, իբրև թէ իր զօրութեանը վրայ վստահ, որ Ժէրմէն, թէպէտ սարսափահար, ժպտեցաւ։

Անշուշտ յիմար էր որ այդ աղջկան իրեն պատմածին կը հաւատար։

Հանրմին իրեն ըրած ընդունելութիւնը, Բրէնս Մուրատի յարգալից հիւրընկալութիւնը, ամեն բան, մինչև իսկ Ֆրանսուայի բարի դալուստի ողջոյնը, չէր նպաստեր միթէ իրեն սիրտ տալու։ Եւ այսպէս ամենափոքր բաներէն կ'ազդուէր, եթէ ամեն ըսուածին թեթևօրէն հաւատ կ'ընծայէր, աւելի աղէկ էր որ հոն մնար, Մարսէլի մօտ, որուն արդէն այնչափ բազմահոդ կեանքը դժուարացնելէ զատ ուրիշ բան չպիտի գար ձեռքէն։

Ա՜հ, աս ո՞րչափ վեհերոտ է, կ'ըսէր։

Սթա Ապուհա անտարակոյս հասկցաւ իր ընկերուհւոյն հոգւոյն մէջ անցածը, վասընզի յախուռն կերպով անոր խորհրդածութիւնները ընդմիջեց։

—Օ՜ն ուրեմն, կը տեսնեմ որ անօթի չէք, ձեզի տանիմ ձեր սենեակը ցուցնեմ։

Այդ սենեակը կանանոցին ձախ թևին վրայ էր, ահագին երկայն նրբանցքի մը ծայրը, մեծ սենեակ մը, շատ մաքուր, շատ լուսաւէտ, բայց քիչ մը անզարդ, իբրև կարասի՝ միայն սիւնաւոր երկաթեայ մահճակալ մը, ճերմակ շղարշէ մծղսապահով մը շրջապատուած, գորշ կտաւով ծածկուած սատր մը, պարսկական խստակապոյտ վարագոյրներ՝ որոց վրայ փոքրիկ ճերմակ հովիւներ հեռուէն հեռու կը ժպտէին փոքրիկ գորշագոյն հովուուհիներու։ Նմանապէս բիրտ կապոյտ գորգ մը գետնի քարերը կը ծածկէր։

(Շարունակելի) Թարգմ. Յ. ՍԵԹԵԱՆ

Յ. ԲԷՄՊԼԻՃԵԱՆ ԵՒ ԸՆԿ.
ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆ ԾԽԱԽՈՏԻ ԵՒ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ
ՄԹԵՐԱՆՈՑ ԵՒ ՎԱԱՃՌԱՏԵՂԻ — ԳԱՀԻՐԷ, ԱԹԱՊԱ–ԷԼ–ԽԱՏՐԱ, ՆԱԽԿԻՆ ԶԱՊԹԻԵԼԻ ՇԷՆՔԻՆ ԴԷՄ

ՄՈՒԶՈՒԱԼ ԼԱՅՖ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒ-ԵՈՐՔԻ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1843 ԹՎՈՒՆ

ՊԱՀԵՍՏԻ ԳՈՒՄԱՐ ՄԷԿ ՄԻԼԻԱՐ 563 ՄԻԼԻՈՆ 961 ՀԱԶԱՐ ՖՐԱՆՔ

Ապահովագրակամ ամեն կարելի դրութիւնները կը գտնուին. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զուտակաց դրամագլուխ, ցմահ եկամուտ, եւայլն

ՄՈՒԶՈՒԱԼ ԼԱՅՖի սակագինը և ապահովագրութեան զանազան դրութիւնները չուսումնասիրած մի՛ ապահովագրուիր. — Աւատաձեռն պայմաններ։

Տեղեկութեանց համար դիմել ի Գահիրէ առ ՊՊ. Ն. ՔԻՐԶԻՕ և Ժ. ՎԱԼՖԻՇ, Ընդհ. Ներկայացուցիչք։

Աղեքսանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակատար։ Գ. ԵԿԱՒՈՖ Դեր-Գործակալ ի Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ 200,000,000 ՖՐԱՆՔ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ Ց ԵԳԻՊՏՈՍ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱՀԻՐԷ ԼԲՈՌ-ՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԷՆ կ'ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ՝, ինչպէս փոխատուութիւն արժէքաւոր թուղթերու վրայ։

Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր աւանդներու վրայ։

Ֆրանսայի և օտար երկիրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր։

Կը գանձէ Եգիպտոսի և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր։

Աւանդ ձգուած դրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաժամով մուրհակներ կուտայ։

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՕԼՍՈՅ ՄԻՋԵՒ

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱՒԵՐՈՎ

ՁՈՒՆԱՄՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐՔԻՈՑ ԳԻՄ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն չորեքշաբթի օր ժամը 4ին (յ. մ.) ղէպի Բիրէա, Իզմիր, Մէտիլի եւ Կ. Պոլիս։

ԺԱՄԱՆՈՒՄ. — Մինոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին։

ՄԱՆՕԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգենաւերը Բիրէա հանդիպելուն, Աթէնք այցելել։

ՍՈՒՐԻՈՅ ԳԻՄ.

ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) ղէպի Բօր-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մերսին և Իսկէնտէրուն։

ԺԱՄԱՆՈՒՄ. — Մինոյն նաւահանգիստներէն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին։

Տասնըհինգ օրը անգամ մը՝ երթեւեկ կարմիր Ծովու հետեւեալ նաւահանդիստներու միջև.

ՃԻՏՏԷ, ԱՈՒԱՔԻՆ, ՀՕՏԷՑՏԱ, ԱՏԷՆ

Ճամբորդութեանց և ապրանաց համար դիմել Ընկերութեան Աղեքսանդրիոյ, Բօր-Սայիտի, Սուէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաև Քուքի ամեն մասնաճիւղերուն։

1—1902

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՒՇԵԱՆ

—)(—

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՑՈՅՑԻ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԷՆՆԵՐՈՒ

ԳԱՀԻՐԷ, Մուսքի փողոց,

Ե. եւ Ս. Սիսնատի վաճառատան դէմը

Ապրանաց զանազանութիւն

Երաշխաւորութիւն

Աժանութիւն

Ճոխ հաւաքածոյ Ամերիկեան և Ֆրանսական Քօնօկրաֆներու

Ծանօթ: Վարպետ ժամագործ մը յաճախորդներու տրամադրութեան տակ կը գտնուի։

ԱՅՑԵԼԵՑԷՔ ԵՒ ԳՈՀ ՊԻՏԻ ՄՆԱՔ

ԱՐԾԱԹ

ՄԷՏԱԼ

ԲԱՐԻԶ

1900

ԱՐԱՆՑ

ԳԻՆԵՐՈՎ

ԵՒ

ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ

ՀԱՆԳԵՐՁՆԵՐ

ԸՍՏ ՎԵՐՋԻ ՆՈՐԱԶԵՒՈՒԹԵԱՆ

ՁԱՓԱՒՈՐ ԵՒ ՈՐՈՇԵԱԼ ԳԻՆԵՐ

ԱՂԷՔՍԱՆԴՐԻԱ — ԳԱՀԻՐԷ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՇԹԼԷՑՆ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ

Հաստատեալ խտիվական Հրամանագրով

25 Յունվար 1898

Դրամագլուխ	*Մնդլ. ոսկի*	1,500,000
Պահեստի դրամ	*„ „*	193,000

Կառավարիչ՝ Սըր Էլվին Բալմէր.

Ընկ. կեդրոն ի Գահիրէ։ Մասնաճիւղեր. Աղեքսանդրիա, Մանսուրա, Խարթում։

Եգիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ։

Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ ՄԷՋ

Կը տպուին ամէն լեզուէ հարսանեկան հրաւիրագրեր, Տեղեկագրեր, Նամակագլուխ, Դրքեր, Տոմսեր, Հաշուեցոյցեր, Մահագրեր Յայտարարութիւններ, եւայլն, եւայլն։

ԱԺԱՆ ԳՆԵՐՈՎ



ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ ՓՈՒՔՈՎ ԿԸ ԿԱՏԱՐՈՒՒՍ

50 % ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼՈՎ

ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՈՒՆ

ՍԷՏԷՖՃԵԱՆ

ՀԻՄՆԵԱԼ Ի Կ. ՊՕԼԻՍ 1882 ԹՎՈՒՆ

ՓՈԽԱԴՐԵԱԼ Ի ԳԱՀԻՐԷ 1898 ԹՎՈՒՆ

ԱՔԱՊԱ-ԷԼ-ԽԱՏՐԱ — ՊԱԶԱՐ-ՄՈՒՐՈՒՐ

Այս ծանօթ լուսանկարչատան մէջ շատ խնամեալ և վերջին դրութեամբ կը պատրաստուին ամեն մեծութեամբ և ամեն տեսակ լուսանկարներ. կոուփներ և ակրանտիսրմաններ։

Դուրսը առնուելիք լուսանկարներու համար գիւրամատչելի պայմաններ։

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՃԱՇԱԿ

ԳԻՆԵՐՈՒ ՁԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՆ

ՔԻՆԾԸԼ ԵՒ ՍԻՄՕՆԱ

Հաստատեալ յամին 1860

ՀԱՑԱԳՈՐԾՔ-ՀԱՑԹԱՑԹԻՂՔ Ն. Բ. ԽՏԻՎԻՆ

Այս նշանաւոր փուռին մէջ կը պատրաստուին ամեն տեսակ հացեր, պիսքիւներ, եւ քէյքեր։

Այս փուռին մասնաւոր կառքեր կը շրջագային Գահիրէի ամեն թաղերու մէջ, ինչպէս նաև Զէյթուն և ի Հելվան։

Թէվֆիգիյէ, Պուլաքի ճամբայ. ԳԱՀԻՐԷ

Թէլէֆոն թիւ 504.